ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ԳԼԽԱՎՈՐ ԽՈՐՀՐԴԱՏՈՒԻ ՊԱՇՏՈՆԻ ՀԱԿԻՐՃ ՆԿԱՐԱԳԻՐԸ

1. **Գործառույթներ**.

Գլխավոր խորհրդատուն՝

1) Ապահովում է հարկադիր կատարման ենթակա ակտերի հարկադիր կատարումը.

2) Իրականացնում է առանձին տեսակի կատարողական վարույթներով համապատասխան կատարողական գործողությունները՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի և ոլորտը կարգավորող այլ օրենքներին համապատասխան.

3) Կատարողական գործողությունների կատարման ընթացքում իր իրավասության սահմաններում կայացնում է որոշումներ.

4) Կազմակերպում է Բաժնում կարճված և ավարտված կատարողական վարույթների արխիվացման գործընթացը.

5) Պատասխանում է Բաժին ներկայացված դիմում-բողոքներին.

6) Կատարողական վարույթներով դատական, կատարողական վարույթի կողմերին քրեական և վարչական պատասխանատվության ենթարկելու գործերով համագործակցում է Ծառայության իրավաբանական բաժնի հետ:

7) որպես փորձաշրջանի համակարգող, Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունում առաջին անգամ պաշտոն զբաղեցնող անձին օգնում է ծրագրով նախատեսված գործառույթների իրականացման հարցում, ծանոթացնում այդ գործառույթների արդյունավետ կատարման եղանակներին, աշխատանքների կատարման համար անհրաժեշտ ընթացակարգերին:

2. **Պաշտոնին ներկայացվող պահանջներ**.

Հարկադիր կատարման ծառայության գլխավոր խմբի պաշտոններում կարող է նշանակվել այն անձը, որն զբաղեցրել է գլխավոր հարկադիր կատարողի կամ տեղակալի կամ հարկադիր կատարման ծառայության գլխավոր խմբի պաշտոն կամ առնվազն երկու տարի՝ առաջատար խմբի պաշտոն կամ ունի հանրային ծառայության առնվազն երկու տարվա ստաժ կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ պաշտոնի անձնագրով պահանջվող աշխատանքի բնագավառում՝ երեք տարվա աշխատանքային ստաժ:

Պաշտոնին ներկայացվող մասնագիտական պահանջները սահմանված են ՀՀ փոխվարչապետի 30 հուլիսի 2020 թվականի N 461-Ն որոշմամբ: